# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

06/200

« 18» ապրիլի 2014թ.

*ՀԱՐԳԵԼԻ ՄԱՍՆԱԿԻՑ*
*(ըստ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 ծածկագրով մրցույթի*
*շրջանակներում գրանցված կազմակերպությունների ցանկի)*

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված ՆՇՀԱՊՁԲ-11/8 շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները :

Սույն հրավերի ( ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « ՀՀՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-ՀՏ-14/09» :

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Կիևյան-8 հասցեով, N39 սենյակ, մինչև 2014թ. մայիսի 05-ը, ժամը 11 : 00-ն :Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Կ.Աերոբյանը :

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը :

Հայտերը պարունակող ծրարները կբացվեն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի շենքում, ք.Երևան, Կիևյան-8 հասցեով,N 39 սենյակում, 2014թ.-ի մայիսի 05-ին , ժամը 11 :00-ին :

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների մատակարարման տեխնիկական բնութագրերը և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանների անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N1 հավելվածում :

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա/ Գնման ընթացակարգի դիմում

բ/ Գնային առաջարկ : Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով :

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով :

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը :

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ :

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է paara-bugalteria@rambler.ru

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը «Գնումների մասին» օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է Պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը կամ տվյալները Պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը, ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների Պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները :

Առդիր՝ 15էջ:

*ՌԵԿՏՈՐ՝* *Ա.ԼՈՒՔՅԱՆ*

*կատ.՝ Կ.Սերոբյան*
*հեռ.22-26-20*